

եանի . տպարանը յետոյ կը փոխադրուի Ղաչարիա (քրանվայի ճամբուն վրայ , Ամենափրկիչ ժամին կողմերը) : — Իւրիճեան վարած է ազգ. գանազան պաշտօններ և 10 տարի կրթ. տեսչութիւնն ըրած քաղաքին վարժարաններու : Ունի շատ մը բարգձմանութիւն և Դեղինակութիւն : — Մեռած է 28 Յունիս 1904 ին և բաղուած Շիշլի , բողոքով կարող նրապարակագիրի նամբու մը : — «Մասիս»ի գրաշարապետ եղած է «թօփայ» † Գրիգոր . իսկ շատ վերջերը՝ Շիշմանեան և Մկրտիչեան Արտաշէանները : — Այս առթիւ տեղեցուններ քե Պօլսանայ կարգ մը գրաշարապետներ ալ կան՝ մեռած և ողջ՝ որոնք միայն բուրքերենի պարապելունն նամար պիտի չչիշատակուին յաջորդ տպարաններու շարքին մէջ : — **Մասիսի** տպարանէն լոյս ընծայուած են նե-տեւեանները . — Բանտք իմ (1861) . ճանապարհորդութիւն յԱնի (1865) . Առաջարկութիւն կրդ. Յանձնաժողովոյ (1866) . Նամակ Ս. Արք. Ջաղպեանց (1867) . Այրարատայ նրարուղիս . Հոգա-կաւորք ոճիրք . Երկարէ դիմակով մարդը (1870) . Հայ Պատրիարք մը ի Պատրիք (1872) . Քոյք. Տեսեսութիւն (1873) . Հատուածք պատմութեան Հայաստանի (1874) . Սանձանադրութիւն Յամ. Պետտրեան . Ռատուն . միութիւն . Վ.Է.Քիլիպի երեցը (1877) . Կարմիր մարդոց երգումը (1882) . Մարքիզուհին . Ամուսնութիւնը Բարիզի (1883) , ևն . մեծ մասամբ Իւրիճեանի բարգձմանութիւնները :



81. **Յովհ. Մարգարեան** \* — Ազգականն էր Պաշեան Կարապետ Ամիրայի : 1853 ին **Արք. Մարտեանի** Իգմիտի տպարանը գնելով՝ նոյնին խնամք տպագրել տուած է **Սկիւտարի** մէջ «Հագարունէկ գիշերներ» ք : Սակայն «Մասիս»ի նոր տպարանին վարչութիւնը Ա. Մուրատեանի յանձնուելով , Մարգարեան առանձին կը մնայ , և անկարող նոյն գործը շարունակելու՝ մամուլն ու առուերը կը ծախէ **Յ. Տէրոյնցի** որ գտնուէր Սկիւտարէն Պօլսա փոխադրելով կը բանայ իր տպարանը : — Մարգարեանէ առաջ Ս Կ Ի Ի Տ Ա Բ առաջին տպարանը նիւնուած է ձեւարանի , իսկ Մարգարեանէ վերջ՝ Մկրտիչ Վրդ. Խրիմեանիներ :



82. **Յարութիւն Փափազեան** \* — Երիզացի բողոքական . Չրբիլի տպարանին մէջ աշխատած է , պահ մըն ալ ընկերացած Յ. Մինասեանի : Իր նիւնած տպարանէն [որ Յ. Փ. (ՃԼԻՒՏԵՀԱՆԷ) տիրոջն ալ պահած է] նրատարակուած են նետեւեանները . — Գործք Առաքելոց (1853) . Ռուրէն Անդրեաս Յ. Փափազեան վրձագ. (1855) . Ընթերցարան (1858) . Բարի մարդ և բարի քրիստոնեայ (1860) . Հաւաքածոյ նալկ . ասացուածոց . Ներածութիւն Ս. Գրոց (1869) . Տորդորակ . Բանք նաւառացիոյ ուրուք ('871) . Գամելիազարդ տիկին . Հաւատք տղայոց նամար բացատրուած . Քերականութիւն գաղղ. լեզուի . Մեծ ճշմարտութիւններ տղայոց նամար (1875) . Կիրակնօրեայ դպրոցայ դասեր (1879) : Այնուհետև քաշուած է գործէ և պահ մը Յ. Պօլսանեանի տպարանը գրաշարապետութիւն ընելէ վերջ՝ մեռած :



83. **Տայ. Քահմիզեան (Էմիրէր խան)** . — Այս խանին անուամբ գոյութիւն ունեցած տպարանին տեղը կը կարծուի ըլլայ Քահմիզեան որ 1862 ին օրացոյց մը տպած է , իսկ 1854 ին 3 գիրք՝ առանց տպարանատիրոջ յիշատակութեան . — Հենրիկոս կամ անառակ տղայ . Բարի Ֆրիտօյներ . Անբարեխառնութիւն (Քարգմ. անգլ. Յովհ. Գ. Կրճիկեան) :



84. **Յ. Տէրոյնց** \* — Ծնած է 8 Յոգոս . 1801 ին Պրուսա : Նին . կրթ. ստացած է անդ : Յետոյ ինքնօգնութեամբ ուսած շատ մը լեզուներ : Արմաշու վանքն ալ մտնելով